

Հ Ա Շ ՈՒ Ե Ց Ո Յ Ց

ԵՐՈՒՍԱԶԻՄԱՅ ՎԱՆՔԻՆ ԵՆԵՄՏԻՑ
1882-83 ՏԱՐԻՈՅ

ԱՐԴԻՒՆԻՔ

Ընդհանուր կաշվածություն	1400	1400
Երուսաղեմի կալուածոց հաւաքեալ վարձքերէն տարեկան արդիւնք	97,914.05	
Յ՛երուսաղեմ վաճառեալ շրի արդիւնք	9,215.25	
Երուսաղեմի և Բեթղեհէմի ձիթեղեղեղ և արտա-րէից մշակութեան արդիւնք	10,505.15	
Յուպպէի կալուածոց հաւաքեալ վարձքերէն տա-րեկան արդիւնք	106,735.25	
Պէրուլի " " " "	2,436.30	
Դամասկոսի " " " "	8,040.35	
Դաշիւրի " " " "	13,611.20	
Բերի " " " "	12,409.30	
Տիւրքմենկանի " " " "	21,270	
Ռէմի " " " "	10,175	
Լաւոյի " " " "	2,775	
Կ. Պոլսոյ վաղընեւոր արդիւնք և 1 տան վարձք	13,670.20	
Կարնոյ կալուածոց 3 տարւոյ (1297-98-99) հա-ւաքեալ վարձքերէն արդիւնք	29,874.20	
Ալեքսանդրիոյ կալուածոց հաւաքեալ վարձքերէն արդիւնք	14,397	
Դազէի գետին տարեկան վարձք	55.30	
Տիւրքի կալուածոց մասնաւոր արդիւնք	51	353,438.15

Գործարանայ		
Մոմատունէն դոյացեալ տարեկան զուտ շահ	5,171	
Տպարանէն	11,490	
Լուսանկարի գործարանէն դոյացեալ զուտ շահ	9,829.30	26,490.30

Երուսաղեմի	Ս. Յակովբայ, Ս. Աստուածածին և Ս. Փրկչի մասնաւոր արդիւնք	1,257.30	
Ընդհանուր գանձանակագրամ, յերուսաղեմ և ի գանազան գաւառս		8,079.04	9,336.34

Դոյացող		
Ալեքեան Յակոբ Էփ. ի կտակին տոկոսէն ժառ. վարժարանի յատկացեալ բաժնիք 70 0/0	27,339	
Երուսաղեմի օրիորդաց դպրոցի ձեռագործաց վիճակահանութեան արդիւնքը	2,470	29,809

Բարեպաշտութիւն		
Ի Ս. Յակովբայ 1112 ուխտաւորաց մեծ դարպաս	135,058.40	
Պատարագութիւն, կոնդակագրամի, վարագործի, նուիրաց, կրտականութիւն և Ս. Յարութեան դրան բացման արդիւնք	90,078.05	
Ի Ս. Յարութեան 821 ուխտաւորաց դարպաս, մօմագին և ն	12,780.35	
Ի Ս. Երուսաղեմ 727 " " " "	9,847	
Թոպպէի և Ռէմի 325 " " " "	20,663.20	
Ի Դամասկոս 165 " " " "	1,418.15	269,846.05

Պարտական		
Վախճանեալ միաբանից անձնական դրամներն	18,567.10	
	707,188.14	
	3,706,937.29	
	4,414,126.03	

ԲԱՅ		

Անցեալ տարւոյ հաշուէն մնացեալ բաց	3,502,052.03	
Մեքսիկոյ		
Ի Ս. Յակովբայ, ի Ս. Յարութեան և ի Ս. Հրեշտա-կայեալ միաբանից և մայրապետաց ուտելեաց ծախք, ընդհանուր սուրճ և վայտ	139,961.30	
Գրձադրեաց միաբանից, դպրաց և սարկաւա-գաց հանդերձի և լուսացի ծախք	23,321.20	
Միաբանական տարեկան	42,000	
Միաբանից, ժառանգաւորաց և Երուսաղեմի հայազգի աղքատաց բժշկի, դեղի և ն. ծախք	15,635.10	190,918.20

Երուսաղեմի	Ս. Յակովբայ, Ս. Աստուածածին և Ս. Փրկչի իւղ, և մօմ և այլ գանազան ծախքերը	22,467.15	
Ս. Յարութեան տաճարին տարեկան զանազան ծախքերը	26,532.35		
Ս. Երուսաղեմի տաճարին և միաբանից ու տեղեաց տարեկան ծախքերը	37,122.25		
Ի Ս. Յակովբայ և ի Ս. Աստուածածին ժամուց	19,427.35	95,550.30	

Տեւալ-Բեռն		
Կ. Պոլսոյ փոխանորդարանի տարեկան ծախքը	33,080	
Յուպպէի վանուց տարեկան ծախքը	25,956.25	
Ռէմի " " " "	7,025	
Պէրուլի " " " "	4,577.10	
Դամասկոսի " " " "	6,227.20	76,866.15

Ընդհանուր և զուտ ծախք		
Պատրիարքարանի համար տարեկան մասնաւոր ծախք	5,028	
Թարգմանատան զանազան ծախքերը և պահա-կաց ամսականք	8,749.10	
Դիւանատանց ծախք, թղթատար, հեռագիր և լրագրաց բաժանորդագին	15,181.25	
Հանդիւսաւոր աւուրց, սոցորական ու պատահա-կան երթեւեկութեանց ձիու և ն. ծախք	7,090	
Սահմանեալ պարգեւ օրդոնալ աւուրց և անձանց, նաեւ պարգեւ պատահական, և վեճ	16,125.20	
Երուսաղեմի հայազգի աղքատաց հաց (12,000), ընդհանուր ողորմութիւն (2,777), Բեթղեհէմի հաց աղքատաց, զինուորական տուրք և ուղորմութիւն (1,165)	15,940	
Հայազգաց հաց և կերակուր	4,000	72,124.15

Դոյացող		
Ճառանգաւորաց վարժարանի (70,458 1/2,) Ե-րուսաղեմի երկսեռ դպրոցաց (10,120) և Բեթղեհէմի դպրոցին (1,235) տարեկան ծախքեր		81,813.20

Ընդհանուր կաշվածություն և վաճառք		
Երուսաղեմի կալուածոց (12,470 7/8), վանօրէից (8,540), եկեղեցեաց (2,164), և Երուսաղեմի կալուածոց (2,309), նորոգութեանց ծախք	23,764.35	
Երուսաղեմի և Բեթղեհէմի ձիթեղեղեղ և ար-տօրէից մշակութեան ծախք	6,735.20	
Յուպպէի վանուց (5,538 3/8), և կալուածոց (11,061), նորոգութեանց ծախք	16,599.15	
Պէրուլի կալուածոց նորոգութեանց (1,539), և 5 տարեկան տուրք (1,298)	2,837	
Դամասկոսի կալուածոց նորոգութեանց ծախք	2,317.10	

Ալեքսանդրիոյ կալուածոց մասնաւոր ծախք	643.30	
Գահիրէի կալուածոց նորոգութեան (1,996 1/8), և գործակալի ամսականք (8,225)	10,224.5	
Բեռլի կալուածոց նորոգութեանց ծախք	1,460.20	
Տիւրքմենկանի կալուածոց նորոգութեան ծախք (4,577), գրագրի ամսականք (1,680) և տա-րեկան տուրք (1,740)	7,997	
Կարնոյ կալուածոց նորոգութեան ծախք (1,242 1/2), հաւաքեաց վարձք (2,259), և տուրք (3,318 1/4)	6,820.10	
Կ. Պոլսոյ վաղընեւոր ծախք (148), և մէկ տա-րեկան տուրք (2,000)	2,148	
Ռէմիի կալուածոց նորոգութեանց ծախք	3,150	
Լաւոյի կալուածոց նորոգութեան և տեղին ծախքերը	2,775	89,569.25

Ուխտաւորաց		
Ուխտաւորաց առթիւ գանազան ծախք յերու-սաղեմ, ի Յուպպէ և ի Ս. Երուսաղեմ		29,878.25
Տեւալ-Բեռն		
Պարտամուրհակաց, կամ տոկոսաւոր պարտուց տոկոս, և Տեղոյէնի ամսականք		275,435.10
		912,074
		4,414,126.03

Կ Ե Ր Ի Ռ 1883 - Ա Պ Ր Ի Լ 30		
ՊԱՐՏՔ	ՊԱՆԱՆԱՔ	
Տոկոսաւոր պարտք	3,400,325	Դրամարկեր պատրաստի
Ձեռն. պահանջատեարք	1,232.10	Գրամ
Պահանջող հաշիւք	476,422.33	Պարեն և իւրթք
		Ձեռն. պարտականք
		Պարտական հաշիւք
		Բաց պարտք
	3,878,180.05	3,878,180.05

Երուսաղեմի վանքին տարեկան հաշիւներն Ամեն. Եսայի Ս. Պատրիարքին զրկելու առթիւ, Միաբա-նական Ընդհ. Ժողովն հետեւեալ նամակ ուղղած է առ Ն. Սրբապետութիւն.

Ամենպատիւ Սրբազան Պատրիարք Հայոց, Նախագահ Միաբանական Ս. Ուխտին ի վ. Պոլիս.

Միաբանական Ընդհ. Ժողովն իմե-կը յուսար որ այս տարի Ձեր Բարձր Սրբապետութեան ներկայութեամբ եւ նախադասութեամբ ներկայ չըլլանք բա-ցուն ընելու բարեբաղդութիւնը պիտի ունենար, սակայն դժբաղդաբար այս անգամ եւս պարտաւորեցաւ. Ձեր Բար-ձր Սրբապետութեան բարեպաշտութեամբ ընել սոյն չըլլանք բացումն. ուստի Տնօրէն խորհրդոյ տարեկան համարա-տուութիւնն ստանալով՝ վաւերացնելէն յետոյ ներկայեալ կը զրկէ իւր տա-րեկան համարաւորութիւնն, առ Աղբ. Երեմիայի տարեկան Ժողովն ներկայացնե-լու համար.

Միաբանական Ընդհ. Ժողովն առ-մարտաւորութեան դրերն են. 1. Տնօր-կագիր, 2. Հաշուեցոյց 1882-83 տա-րւոյ եւ 3. Երեսօրաց 1883-84 տարւոյ.

Միաբանական Ընդհ. Ժողովն հե-րէն խորհրդոյ պաշտօնավարութեան չըլլանք լրման եւ հրաժարման առթիւ նկատողութեան անելով Ձեր Բարձր Սրբապետութեան 1883 ապրիլ 7 եւ 20 մար 35/1 նամակն, համաձայնութեամբ որոշեց որ Տնօրէն խորհուրդն առժա-նայ կերպիւ շարունակէ իւր պաշտօնը զվերաբար Ձեր Սրբապետութեան, ան-յուրաքանչեւ անհրաժեշտութեամբ.

Սրբապետութիւնը ի մօտոյ յաղտու-թեամբ պիտի կրնայ վերադառնալ. ինչպէս անցեալ տարւոյ Տնօրէն.

ԹԵՐԹՕՆ ՄԱՍԻՍԻ

(20)

ԷՔԹՈՐ ՄԱՆՈՅ

ԸՆՏԱՆԵԶՈՒՐԿ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

40.

ԴԱՏԱՍԱՆԻ ԱՌԱՋԻՆ

Փորը պատիճեմքը չէին կրնար մոռցնել իւր խնամքը, իւր քաղցը և օգտակար խօսքերն, և գործիւնաց փոր-ձերը զորս առած էր ինձ՝ քանի որ ի միասին էինք. կը սիրէր զիս, ես ալ զիրեւ կը սիրէի.

Այս բաժանում դառնապէս արտմեցուց զիս. Երբ իրար տեսնէ պիտի տեսնէինք. Բանտի խօսք ըրեր էին. Ո՛րչափ ժամանակ կրնար տեսնել այդ բանտարկութիւնն. Ես ի՞նչ պիտի ընէի այն միջոցին. ի՞նչպէս պիտի ապրէի:

Տէրս իւր բոլոր ունեցածն իւր վրան պահելու սո-վորութիւն ունէր. և ոստիկանութեան գործակալէն քաշըլուելով տարուկէն առաջ ժամանակ չէր ունե-ցած ինձ դրամ տալու.

Ես քանի մը պղնձ դրամ միայն ունէի գրպանիս մէջ. բաւական կրնար լինիլ մեզ սնուցանելու. Ժողի-րէօրը, շուներն և զիս.

Այսպէս երկու օր անձկութեան մէջ անցուցի, չհամարձակելով դուրս ելնել պանդոկին բակէն, Ժողի-րէօրին և շուներուն հետ զբաղելով, որք ամենքն ալ տխուր և սրտաւատն կ'երեւէին.

Վերապէս, երրորդ օրը, մարդ մը նմանկ մը բե-րաւ ինձ վիթալիս. Այն նմանակով տեսն կ'ըսէր ինձ թէ բանտը դուրս եմ, և յառաջիկայ շաբաթ օրը ոստիկանութեան պատժական ատենին պիտի ներկա-յանար իւրեւ զիմարդով իշխանութեան պաշտօնէի մը և իւրեւ անոր վրայ ձեռք վերցնող.

«Բարեկութիւն չըլլալով զսպել, կ'աւելցնէր, ծանր սխալ մը գործեցի, որ շատի պիտի նստի ինձ. Բայց հիմա ճանչիւր օգուտ չունի. Ատենանին ներկայացած ժամանակ դու ալ եկ ու ներկայ դնուէ, որպէս զի դու ալ խրատ առնուիս».

Յետոյ իմ բռնելիք ընթացքիս համար խրատներ կուտար ինձ, և կը վերջացնէր համբուրելով զիս և յանձնարարելով որ իւր կողմանէ փախչեմք դէպքի,

Ժողի-րէօր, Տնօրէն և Ձեռպիտոյ.

Նամակ կարդացած ժամանակս, Գաբի ոտներուս մէջ տեղը կեցած, և քիթը թուղթի վրայ դրած կը հոտոտէր մոմաւորով և պոչն երբեքնելով, որքմէ յայտ-նի կը տեսնուէր թէ հոտաւորութեամբ հասկցեր էր որ այն նամակ իւր տիրոջ ձեռքէն անցած էր. երբք օրէ ի վեր այս առաջին անգամն էր որ ուրախութիւն և աշխոյժ ցոյց կուտար.

Տեղեկութիւն ստանալով իմացայ որ պատժական ատենին ունկնդրութիւնը ժամը տասնին կը սկսէր. Շաբաթ օրը ժամ իննին դնացի, դրան առջեւ սպա-սեցի, և ամենէն առաջ ես ներս մտայ. Քիչ քիչ առե-նաբարձը լցուցեալ, և տեսայ որ ոստիկանութեան պաշտօնէին հետ անցած դէպքին ներկայ դատուող-ներէն չատեր հոն էին.

Մինչեւ այն ժամանակ ոչ դատական ատեններու, ոչ ալ դատաստանի վրայ պարագիտար ունէի, բայց բնազդմամբ ստատիկ երկիւղ կ'ըզայի. Թէեւ գործը տիրոջ վրայ էր և ոչ իմ, բայց և այնպէս կը թուէր ինձ թէ վտանգի մէջ էի. Գնացի մեծ վտառանի մը ետին կ'ընկայ, և պատին տակը մտնելով, հնար եւ դանին չափ զիս պատկիցուցի.

Նախ ուրիշ մարդիկ դատուեցան, որք գողութիւն ըրեր կամ ծեծկուր էին, և ամենն ալ «անմեղ ենք» կ'ընէին.

Վերջապէս վիթալիս եկաւ նստաւ երկու զինուոր-ներու մէջ տեղը այն նստարանին վրայ, ուր վերջիւնալ մարդիկն իրմէ առաջ նստած էին.

Ինչ որ նախ ըսուեցաւ, ինչ որ իրեն հարցուեցաւ, ինչ որ պատասխանեց չեմ գիտեր. սիրտս սաստիկ յուզուած լինելուն չկրցի բան մը լսել, կամ գոնէ հասկնալ, վասն զի մտիկ ընելէ առելի տեսնելու ու շաղիւ էի.

Տիրոջ կը նայէի, որ ոտքի վրայ կանգնած էր իւր երկայն սպիտակ մազերի ետին ձգած, ամօթահար և նստելու մարդու մը կերպարանքով. դատաւորին կը նայէի որ զայն կը հարցաքննէր.

Արդ՝ կը խոստովանէի որ քեզ ձերբակալող պաշտօ-նէին հարուածներ դարձեալ եմ.

— Ո՛ր հարուածներ, Տէր նախագահ, այլ միայն մէկ հարուած. երբոր մեր ներկայացումը կատարու-լու տեղն եկայ, տեսայ որ պաշտօնէայն ապտակ մը տուաւ իմ թոյլի տուրք.

— Այն տղան քու զուակդ չէ.

— Ո՛ր, Տէր նախագահ, բայց զուակիս պէս կը սի-րեմ. երբոր անոր ապտակահար լինիլ տեսայ, չկրցի բարկութիւնս զգալ, մէկէն բռնեցի պաշտօնէին ձեռքն, և լքողուցի որ նորէն զարնէ.

— Դուք չըզակի՞ք պաշտօնէին.

— Այսինքն երբոր օձիքս բռնեց, մոռցայ իւր ու լինիլ, կամ մանաւանդ պարզ մարդու մը տեղ դրի զայն, և բնազդական շարժում մ'ըրի ակամայ.

— Ձեր տարիքն ունեցող մարդ մը պէտք է որ ինք-զինք բռնէ.

— Այո, պէտք է որ ինքզինք բռնէ. Դժբաղդա-բար մարդ ամեն ժամանակ չընէր ինչ որ պարտի ը-այսօր կ'ըզամ.

— Այժմ պաշտօնէայն մտիկ պիտի ընենք.

Այս վերջին պատմեց եղբուկիւն ինչպէս որ անցած էր, բայց առաւել պնդելով այն կերպերուն վրայ որով ծաղրած էին իւր անձը, իւր ձայնը, և իւր շարժումները.

— Այս վկայութեան միջոցին, վիթալիս, փոխա-նակ ուղարկութեամբ մտիկ ընելու, աչքը դատա-րանին չորս կողմ կը պտտեցնէր. Հասկցայ որ զիս կը փնտռէր. Այն ժամանակ պահուրած տեղէս ելայ, և հետաքրքրեմունքով մէջէն սպրդելով, առջեւի կար-գը անցայ.

Տէրս տեսաւ զիս, և իւր տխրած դէմքը լուսա-ւորեցաւ. զգացի որ զիս տեսնելուն ուրախացաւ. զայս տեսնելով պէտքս արցունքով լցուեցան.

— Ինքզինքը պաշտպանելու համար ուրիշ բան մը չունէիք ըսելիք, հարցուց վերջապէս նախագահը.

— Ինձ համար բան մը չունիմ աւելցնելու, բայց սա տղուն համար, զոր չատ կը սիրեմ և միշտ պիտի մնայ, առեանին ներողամտութիւնը կը լսեցեմ, և կ'աղաչեմ որ հնար եղածին չափ քիչ ժամանակ մեզ իրարմէ բաժնէ.

Կը կարծէի որ թող պիտի տային տէրս, բայց այն-պէս չեղաւ.

Դատաւորներն մին խօսեցաւ քանի մը վայրկեան. յետոյ նախագահը լուրջ ձայնով ըսաւ թէ «վիթալիս անուններով թշնամեց ըրած և ձեռք վերցուցած լինելով ոստիկանութեան պաշտօնէի մը, երկու ամիս բանտարկութեան և հարկեր ֆրանք տու գնաց կը դատապարտուի».

Երկու ամիս բանտարկութիւնն.

Արտաւորներուս մէջէն տեսայ որ, այն դուռն, ուս-կից վիթալիս ներս մտած էր, նորէն բացուեցաւ, և վիթալիս զինուորի մը հետ անկից դուրս ելնելով, նորէն դուռը դոյուեցաւ.

Երկու ամիս բաժանում.

Ո՛ր պիտի երթայինք.

չբն կարմրած, բակին դրանը մէջ պանդոկապետ տեսայ որ երկարօրէն ինձ նայեցաւ.

Երբոր ներս պիտի մտնէի շուներուն ըով երթա-լու համար, զիս կեցուց.

— Է՛յ, ի՞նչ եղաւ տէրք, հարցուց ինձ.

— Դատապարտեցաւ.

— Ո՛րչափ.

— Երկու ամիս բանտարկութեան.

— Եւ ո՞րչափ տուեցաք.

— Հարկեր ֆրանք.

— Երկու ամիս, հարկեր ֆրանք, կրկնեց երեք չորս անգամ.

Ուղեցի ճանքաս շարունակել, նորէն զիս արգիլեց.

— Ի՞նչ պիտի ընես մինչեւ երկու ամիս.

— Ձեմ դիտեր, պարոն.

— Ա՛յ, չեմ գիտեր. Ստակ ունի՞ս ապրելու և ա. նստաններդ պահելու.

— Ո՛ր, պարոն.

— Ուրեմն յոյսդ իմ վրայ դրած ես որ ձեզ հա պահեմ.

— Ո՛ր, պարոն, բնաւ մէկու մը վրայ յոյս չեմ դը-րած.

Եւ արդարեւ, բնաւ մէկու մը վրայ յոյս դրած չէի.

— Իրաւունք ունիս տղաս, ըսաւ պանդոկապետը. կա արդէն քու տէրք շատ ստակ պարաք ունի ինձ. Ես չեմ կրնար ձեզ պահել երկու ամիս առանց փնտալու թէ վերջը պիտի վճարուի՞ն առնելիքներս. ուստի պէտք է որ երթաս առկից.

— Երթամ, բայց ո՞ր կ'ուղեմ որ երթամ.

— Այդ իմ գիտնալու բանս չէ. Ես քու հայրք չեմ, ոչ ալ քու տէրք եմ. Ի՞նչպէս կ'ուղես որ քեզ պահեմ.

Պահ մ'ապշած մնացի. Ի՞նչ ըսեմ. մարդն իրա-ւունք ունէր. Ինչո՞ւ պիտի պահէր մեզ իւր պանդո-կին մէջ. ձանձրոյթ և բնաւ պիտի ըլլայի իրեն.

— Օ՛ր, տղաս, առ շուներդ ու կապիկդ, և դուրս ել. Տիրոջ պաշտպանին ինձ պիտի թողուի. երբոր բանտէն ելնէ, հոս կուգայ պաշտպանը փնտալու, և այն ժամանակ կը կարգադրենք մեր հայրը.

Այս խօսք

